

ՄԻՍՏԵԱԼ-ՆԱՀԱՆԳԱՑ ԲՆԱԿԻԶՔՆ

Թէ և վերջի տարիներս նուազեցան Սմերիկա գնացող գաղթականք, 'ի վերայ այսր ամենայնի Միացեալ-Նահանգաց բնակիչներուն թիւն հսկայաքայլ աճեր է:

Ստոյգ աղբւրներէ քաղելով կը տեսնենք որ հիմա 43 միլիոն բնակիչ ունին. հապա ԲՆՆՆ պիտի ըլլայ բնակչաց

թիւն յամին 1976, իրենց ազատութեան երկրորդ դարադարձին:

Ահաւասիկ զնենք այս տեղ չորեքտասան Նահանգաց բնակիչներուն թիւն 1875 տարւոյն վերջը, բաղդատելով նոյն Նահանգաց բնակիչներուն թուոյն որ ունէին 1870 տարւոյն աշխարհահամարին ժամանակ:

ՆԱՀԱՆԳՔ

	1870	1875
Նեւադա	42500	52500
Նէպրադա	123000	246000
Ռատ Սյէնտ	247000	558000
Քանսաս	364000	528000
Միննզոդա	440000	600000
Գարովին Հարաւային	706000	823000
Լուիզիան	727000	857000
Դէքսաս	819000	1275000
Նիւ-ձըուզէյ	906000	1015000
Ռիզզոնսին	1055000	1237000
Միչիկան	1184000	1334000
Յուա (Iowa)	1192000	1351000
Մասսաչուսէթս	1457000	1652000
Նիւ-Եոթք	4383000	4705000

Բնակչացն աճման կողմանէ քան զամենը նշանաւոր է Դէքսաս Նահանգը, որուն բնակչաց թիւն հինգ տարուան

մէջ աւելցեր է 456000 հոգի, այսինքն աճեր է տարին իբր 100000 բնակիչ:

ԳՍՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՅԱՆԳՂԻՈՑ

Յամին 1875, Անգղիոյ, Սկովտիոյ և Իռլանտայի նաւահանգիստներէն դէպ 'ի Սմերիկա նաւ մուր են 173809 գաղթականք, նուազ 67205 թուով քան յամին 1874, որ գաղթեցին 244014 հոգիք:

Այս 173809 գաղթականաց 84540

հոգիքն էին Անգղիացիք, 41449 Իռլանտացիք, 14686 Սկովտացիք, 34347 օտարք. այսինքն Գերմանացիք, Սկանտինաւիացիք, Գաղղիացիք, Մեննոնիտք Ռուսիոյ, և այլն. 1787 հոգիք ալ աղգութիւններն անժամանօթ:

Որով մասնաւորապէս քրիստոնացի

դաղթականք եղեր են 140675 հոգիք. նախընթաց տարին էին 197269 հոգիք, որոնցմէ կային 116490 Անգղիայի, 60493 Իռլանտայիք և 20286 Սկոտլանդիք:

Անցեալ 1875 տարւոյն 173809 գաղ-

թականներէն 105046 հոգիք զնացին Միացեալ-Նահանգները, 35525 հոգիք Աւստրալիա և Նոր-Չելանտա. 17378 հոգիք անգղիական երկիրները. 15860 հոգիք ուրիշ երկիրներ:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Գաղղիներէն օրագիր մը, (Bulletin français), կը հրատարակէ հետեւեալ համառօտ վիճակագրութիւնը փոխադրութեանց, որ կատարեր է յամին 1875 թարիզու օմնիպիւններուն ընկերութիւնը:

Անցեալ տարի թարիզու օմնիպիւնները փոխադրեր են օրն 345000 հոգի, այսինքն 473 հոգի իւրաքանչիւր օմնիպիւն, 31 հոգի ամեն մէկ ընթացքին: Թամին 1874 այս ճանապարհորդաց թիւն հազիւ քառորդն եղեր էր:

Իւրաքանչիւր օմնիպիւն, միջական հաշուով, օրն ընթացք է 92 քիւմէդը. կառաձիգ և օգնական ձիոց միջական աշխատութիւնն եղեր է օրը 16 քիւմէդը և 436 մէդը:

Ախուր պատրաստ դանուող ձիոց միջական թիւն էր օրն 8250, որոնք 666 օմնիպիւնի կը ծառայէին, հետևաբար իւրաքանչիւր կառքը 12 ձի կը լծէր:

Միջական մուտքն եղեր է առ իւրաքանչիւր ճանապարհորդ 18 հարիւրորդ և $\frac{7}{1000}$, իսկ միջական մուտքն առ իւրաքանչիւր քիւմէդը՝ եղեր է 95 հարիւրորդ:

Ներկայ տարւոյս յուլիսի 29ին վերջացող շաբաթուան մէջ՝ երկրագնդի քանի մը զլխաւոր քաղաքացի մեռելոց թիւն հետեւեալն էր, ըստ Աւստրիական լրագրին (Gazette d'Augsburg):

Առ 100000 բնակիչ մեռեր են բարիւ 47 հոգիք: Գերմանիոյ մէջ մեռեր

են. Պեռլին՝ 75 հոգիք, Պրեզլա՝ 76 հոգիք, Գոլմեր՝ 75 հոգիք, Ֆրանքֆորդ Մայնայ՝ 50 հոգիք, Մակտեպուրկ՝ 59 հոգիք, Քարլսրուհէ՝ 54 հոգիք, Միւնիխ՝ 69 հոգիք, Լայքցիլ՝ 50 հոգիք, Վիլհայմսէն՝ 37 հոգիք, և այլն: Աւստրիոյ մէջ մեռեր են. Վեննա՝ 43 հոգիք, Բրակա՝ 79 հոգիք, Պուտաբէշթ՝ 96 հոգիք, Պեւճիոյ մէջ մեռեր են. Պրիւսսէ՝ 56 հոգիք, Հոլանտիոյ մէջ մեռեր են. Ամսթերտամ՝ 45 հոգիք, Ռոդդէրտամ՝ 52 հոգիք, Լա Հէյ՝ 70 հոգիք, Չուիցերիոյ մէջ մեռեր են. Պալ՝ 48 հոգիք, Սկանտինաւիոյ մէջ մեռեր են. Քրիստիանիա՝ 57 հոգիք, Սթոքհոլմ՝ 56 հոգիք, Գորէնհակէն՝ 46 հոգիք, Խալսիոյ մէջ մեռեր են. Հոսլով՝ 58 հոգիք, Գուրին՝ 42 հոգիք, Անգղիոյ մէջ մեռեր են. Լոնտրա 56 հոգիք, Կլէսկոյ 42 հոգիք, Լիվրքուլ՝ 48 հոգիք, Տըպլին՝ 36 հոգիք, Էսթիմպուրկ՝ 34 հոգիք, Եդիպատոսի մէջ մեռեր են. Ալեքսանդրիա՝ 73 հոգիք, Ամերիկայի Միացեալ-Նահանգացի մէջ մեռեր են. Նիւ-Եօթը՝ 82 հոգիք, Ֆիլատելֆիա՝ 77 հոգիք, Պոսթըն 46 հոգիք, Շիքագոյ՝ 50 հոգիք, Հնդկաստանի մէջ մեռեր են. Պոմպայի՝ 45 հոգիք, Կալկաթա՝ 48 հոգիք, Մատրաս՝ 79 հոգիք:

Մօտերս գաղղիներէն լրագիրն Journal des Débats հետեւեալ տեղեկութիւնները կու տար Ամերիկայի Միացեալ-Նահանգաց բժիշկներուն առ իւ-